ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 83-Լ

«10» 10 2025թ.Ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N 31 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Պետական շահերի պաշտպան» և «Օրենքի պաշտպան» մեդալներով դատախազներին պարգևատրելու անհրաժեշտությունից ելնելով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով և 52-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Դատախազներին, դատախազության գործունեությանն օժանդակող անձանց խրախուսման ներկայացնելու և խրախուսելու կարգը սահմանելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2015 թվականի հունիսի 19-ի N 36 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2018 թվականի ապրիլի 11-ի N 31 հրամանով հաստատված հավելվածի (այսուհետ նաև՝ Հավելված) 19-րդ կետում ««Համագործակցության ամրապնդման համար» կամ «Իրավակարգի ամրապնդման համար» մեդալներով» բառերը փոխարինել ««Համագործակցության ամրապնդման համար», «Իրավակարգի ամրապնդման համար», «Պետական շահերի պաշտպան» կամ «Օրենքի պաշտպան» մեդալներով» բառերով:

2. Հավելվածի 29-րդ կետում ««Իրավակարգի ամրապնդման համար» և «Համագործակցության ամրապնդման համար» մեդալների» բառերը փոխարինել

««Համագործակցության ամրապնդման համար», «Իրավակարգի ամրապնդման համար», «Պետական շահերի պաշտպան» և «Օրենքի պաշտպան» մեդալների» բառերով:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ